

**ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Թարգմանություն, արտահայտչականություն, կրկնություն, ռիթմա-շարահյուսական կրկնություններ, բառային կրկնություններ, ոճական կրկնություններ, բանաստեղծական ռիթմ, մտքի հաճախակիություն, շարահյուսական և քերականական միջոցներ:

Ключевые слова и выражения: Перевод, выразительность, повторение, ритмично-синтаксические повторы, словесные повторы, стилистические повторы, поэтический ритм, частота мысли, синтаксические и грамматические средства.

Key words and expressions: Translation, expressiveness, repetition, rhythmic syntactical repetitions, word repetitions, stylistic repetitions, poetical rhythm, frequency of thought, syntactical and grammatical means.

Անհամաչափ, բայց բարձրարվեստ նմուշների ենք հանդիպում մեր հին բանահյուսության մեջ, որ հաղորդում է Մովսես Խորենացին¹: Գրվել են անհամաչափ, բայց արտահայտչամիջոցներով հարուստ ստեղծագործություններ: «Անհամաչափ քերթութեանց համար նախագաղափար օրինակներ ունինք եկեղեցական տաղերը, երգերը, շարականները և նաև Գ. Նարեկացոյ աղօթական և այլ քերթուածները»², – գրել է բանասեր Ավետիք Բահաթրյանը:

Արտահայտչամիջոցների հորդում է Գրիգոր Նարեկացու և՛ «Մատենան ողբերգութեան» երկում, և՛ տաղերում, և՛ զանձերում: Բազմազան

¹ Տե՛ս **Մովսես Խորենացի**, «Հայոց Պատմութիւն», Մատենագիրք հայոց, հտ. Բ, Ե դար, աշխատասիրութեամբ **Իւզբաշեան Կ., Մուրադեան Պ.**, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1830:

² **Բահաթրեան Ա.**, Հին հայոց տաղաչափական արուեստը, քննական տեսութիւն, Ե., 1984, էջ 11:

Է նրա արտահայտչամիջոցների համակարգը՝ կրկնություններ, հակադրություններ, ճարտասանական ձևեր, թևավոր խոսքի արժեք ունեցող արտահայտությունների տարաբնույթ կիրառություններ և այլն:

Կրկնությունը հնում համարվում էր պերճախոսության ձև, և հեթանոս ճարտասաններն ու եկեղեցու հայրերն ընդլայնում էին դրա արտահայտչականությունը և նույն գաղափարը տարբեր պատկերներով էին վերաարտահայտում³: Նարեկացին նույնպես հետևել է կրկնության այդ եղանակին, սակայն այնպես է այն զարգացրել, որ հասել է դրա անսովոր դրսևորումների՝ նույն բառի բազմիմաստ կիրառում, մտքի հաճախակիություն, շարահյուսական ու քերականական միջոցների կրկնություններ և այլն:

Որքան հզոր է Նարեկացու արվեստը, այնքան դժվար է նրա ստեղծագործությունները թարգմանելը: Նարեկացու «Մատենան»-ին հաղորդակից ենք դառնում թարգմանությունների շնորհիվ, և որպեսզի դրանք նույնպես արտահայտիչ ու կենդանի լինեն, անհրաժեշտ է՝ «արտահայտեն բնօրինակի ձևը՝ ասես ապրում են այդ ձևում, ներծծված են նրանով և անբաժան են նրա բովանդակությունից»⁴:

Կրկնության արտահայտչականությունը դիտարկել ենք Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի՝ «Մատենան»-ի արևելահայերեն աշխարհաբար թարգմանություններում:

1. Ռիթմա-շարահյուսական կրկնություններ

Կրկնությունն առաջին հերթին խոսքին ռիթմ, էներգիա և հստակություն է հաղորդում⁵: Բազմաթիվ են «Մատենան»-ում բառի կամ քերականական ձևի այն կրկնությունները, որոնք ռիթմական դեր կատարում:

Երկի ԻԹ գլխի 52-95-րդ տողերը Նարեկացին սկսել է **«ո՞վ որ»**-ով և ավարտել նույն քերականական ձևին բնորոշ վերջավորությամբ.

Ո՞վ որ զազրեցաւ եւ ոչ ամաչեաց,

Ո՞վ որ զարշեցաւ եւ ոչ պատկառեաց⁶:

³ Չոպանյան Ա., Երկեր, Ե., 1966, էջ 295:

⁴ Лозинский М. «Искусство стихотворного перевода». Перевод-средство взаимного сближения народов. М., 1987, с. 98.

⁵ Федоров А. О художественном переводе. Л., 1941, с. 157.

⁶ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. և Ղազիկյան Ա., Ե., 1985, էջ 361 (այսուհետև՝ «Մատենան»): «Մատենան»-ից մեջբերումներն ընդգրկում ենք այս հրատարակությունից՝ նշելով համապատասխան էջը:

Այսպիսի ռիթմա-շարահյուսական կրկնությունները հնարավոր է ընկալել եթե ոչ լսողությամբ, ապա տեսողությամբ, և թարգմանիչները դրանք նույնությամբ են արտահայտել.

Ո՛վ ապականվեց՝ և չամաչեց,

Ո՛վ գարշելի դարձավ՝ և չպատկառեց⁷:

Ո՛վ ապականվեց՝ ու չպատկառեց,

Գարշելի դարձավ՝ ու ամոթ չզգաց⁸:

Ոչ մի ուրիշ տեքստում ձևի խաղը կամ փոփոխությունն այնքան կարևոր չէ, որքան չափածոյում⁹: «Մատենան»-ը հիմնականում գրված է արձակ, սակայն որոշ հատվածներ հեղինակը չափածո է հորինել: Այսպես են գրված ԻԷ գլխի 11–21-րդ և 57–63-րդ տողերը, որոնք հարակրկնությունների և վերջույթների զուգորդումներ են՝ «մեղայ» բառի կրկնությամբ:

Ստորև բերված հատվածի, որը նաև հանգի և ռիթմի լավագույն դրսևորում է, «*զի անդրադարձութեամբն սկսմամբն եւ վերջաւորաւքն բառիւք*» տողով Նարեկացին ակնարկել է, որ «ինքը գրելու է այնպես, որ յուրաքանչյուր տողի սկզբի բառը կրկնվելով դառնա նաև նրա վերջին բառը՝ «*սկսմամբն եւ վերջաւորաւքն բառիւք*», այսինքն՝ հորինելու է այսպես կոչված շղթայաձև ոտանավորով»¹⁰.

Մեղայ՝ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ,

Մեղայ յ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ (Մատենան, 348):

Թարգմանություններում այսպիսի կրկնությունների պահպանումը նույնպես կարևոր է, քանի որ դրանք փոխանցում են բնագրի բանաստեղծական ռիթմը, զգացմունքայնությունը և հստակությունը.

Մեղա՛ շնորհիդ երախտիքներին, արդարն մեղա՛.

⁷ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Խերանյան Մ., Ե., 1960, էջ 127 (այսուհետև՝ Խերանյան և էջը):

⁸ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմանություն՝ Գևորգյան Վ., Ե., 1979, էջ 178 (այսուհետև՝ Գևորգյան և էջը):

⁹ Алексеева И. Введение в переводоведение. М., 2004, с. 318.

¹⁰ «Մատենան», էջ 1023, ծնթ. 4, տե՛ս նաև Աւետիքեան Գ., Նարեկ աղօթից, համառոտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, Վենետիկ, 1827, էջ 129, ծնթ. 1:

Մեղա՝ երկնային գթառատ սիրույդ, հայտնապես **մեղա՝** (Խերանյան, 113):

Մեղա՝ շնորհիդ երախտիքներին,
Արդարև **մեղա** .
Մեղա՝ երկնային գթառատ սիրուդ,
Հայտնապես **մեղա՝** (Գևորգյան, 158):

2. Բովանդակային կրկնություններ

Բնօրինակի ձևի արտահայտման կարևորությունը պայմանավորված է բովանդակությամբ, քանի որ այն անբախտելի միասնության մեջ է գտնվում բովանդակության հետ: Հետևաբար ձևի փոխանցումն ինքնանպատակ չէ, և այն առաջանում է բնօրինակի բովանդակությունն առավել ամբողջական արտահայտելու անհրաժեշտությունից¹¹: Այս հարցին անդրադարձել է նաև ռուս թարգմանության տեսաբան Անդրեյ Ֆյոդորովը՝ նշելով, որ «...ամեն կարգի կրկնություն, որը, իհարկե, զուտ մեխանիկական դեր չի կատարում, շատ մեծ իմաստային նշանակություն ունի: Այն ընթերցողի կամ լսողի ուշադրություն է կենտրոնացնում ոչ միայն առանձին բառերի կամ բառախմբի վրա, այլև՝ տեքստի ամբողջական մասերի, որոնք կապված են միմյանց հետ կրկնությունների շնորհիվ»¹²: «Մատեան»-ում բովանդակային կրկնություններն արտահայտվել են հետևյալ կերպ՝

Բառային կրկնություններ

Նարեկացին բառային կրկնությունները ստեղծել է հանճարեղ ստեղծագործողին բնորոշ վարպետությամբ՝ դրա տարբեր նշանակություններով:

ա) Թարգմանություններում դրանց ամբողջական արտահայտմամբ հնարավոր է եղել փոխանցել բնագրում իմաստային կարևոր նշանակություն ունեցող բառերի արտահայտչականությունը.

Եւ քեզ միայնոյ՝ **սկզբանդ** եւ **անսկզբանդ**,
Ընդ **սկզբանդ** եւ **սկզբնաւորիդ սկզբանց** («Մատեան», 437):

Սկզբիդ միակ և **անսկզբիդ**,
Հետի **սկզբիդ** և **սկիզբների սկզբնավորիդ** (Գևորգյան, 287):

¹¹ Юсупов Р. Соотношение разноструктурных языков и вопросы перевода (на материале русского и татарского языков). Казань, 2005, с. 140.

¹² Федоров А., նշվ. աշխ., էջ 156-157:

Մեղքն **կենդանացան**՝ յանդիմանեալ յարդարութեանցն,
Եւ ես մահացայ կենացն եւ **կենդանացայ** կորստեանն («Մատեան», 466):

Կենդանացան մեղքերն արդարության երևումով,
Եվ ես մահացա կյանքի համար ու կորստյան համար **կենդանացա**
(Խերանյան, 239):

բ) Կրկնությունները մասամբ կամ ընդհանրապես չպահելու դեպքում թարգմանիչները կորցրել են դրանց իմաստային և արտահայտչական այն նշանակությունը, որին այդքան կարևորություն է տվել հեղինակը.

Նայեցեալ խորհրդով մտացս ի սկզբնաւորն իմ եղելութիւն
Ի **ձեռն ձեռին** ստացողին իմոյ յանէից («Մատեան», 284):

Մտքիս աչքերով դիտելով սկիզբն իմ եղելության,
Որը տեղի ունեցավ Արարչի **ձեռքով**, անէությունից,–հավատում եմ լիահույս (Խերանյան, 42):

Մտատեսությամբ դիտելով սկիզբն իմ եղելության,
Որը կատարվեց արարչի **ձեռքով**՝ անէությունից (Գևորգյան, 62):

Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝
Հատուցանել զհատուցումն նոցա նոցին («Մատեան», 522):

Եվ երբ մեկը իր ձեռքը երկարի նրանց՝ արժանի պատիժը տալու (Խերանյան, 299):

Իսկ եթե մեկը ձեռքը մեկնի հանկարծ
Արժանի պատիժ **փոխհատուցելու** (Գևորգյան, 421):

3. Ոճական կրկնություններ

«Մատեան»-ում ոճական նրբերանգներ են ստեղծել շաղկապների, նախադիրների, դերանունների, վերջածանցների հարակրկնությունները.

ա) «Եւ» շաղկապի հարակրկնությունը ոչ թե միավորել է նախադասության անդամները, այլ, ինչպես նշել է Վ. Առաքելյանը, «խոսքին

խաղաղ եղանակ է հաղորդել, ինչպես նաև ուժեղացրել, առանձին-առանձին շեշտել է այդ նախադասությունները»¹³.

Եւ ի հրամանք քոց՝ արդարութիւն,

Եւ յողորմութեանց քոց՝ ազատութիւն («Մատենան», 279):

Թարգմանություններում շաղկապը, չպահպանելով բնագրում ունեցած իր տեղը, կորցրել է ոճական այդ առանձնահատկությունը և դարձել է երկու հավասարազոր նախադասությունները միավորող միջոց.

Արդարացնում ես հրամանովդ և ողորմությամբդ ազատում (Խերանյան, 37):

Արդարությունը հրամանիցդ է՝

Ազատությունը՝ քո գթությունից (Գևորգյան, 56):

բ) Մեկ այլ դեպքում **«եւ»** շաղկապը զուգորդվել է **«մի՛»** արգելականի հետ՝ շարահյուսական տարբեր կիրառություններով: Սրանք հատկապես այն հատվածներն են, երբ հեղինակը դիմել է Աստծուն՝ «ոխի՛մը կտրուկ՝ դարձնելու համար, տագնապն՝ ակներև, խնդրանքը՝ հրամայաձև, հորդորը՝ շեշտված»¹⁴.

Մի՛ վախճանն անյարմար ի վերայ իմ արշաւեսցէ,

Եւ մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ ի խոնարի լքցի («Մատենան», 580):

Խերանյանը հարակրկնության այսպիսի ձևերը հիմնականում պահպանել է, մինչդեռ Գևորգյանի թարգմանության մեջ շաղկապի բացակայությունը զգալի չափով նպաստել է սրնթացության տպավորություն ստեղծելուն.

Թող որ վախճանը անպատեհ ժամի չարշավի վրաս,

Եվ ոչ էլ շունչս վեր բարձրանալիս՝ ցած ընկնի ինչ-որ արգելքի առած (Խերանյան, 356):

Թող վախճանն անդեպ չարշավի վրաս,

Ոչ էլ շունչս հանկարծ արգելակվելով անդարձ խափանվի (Գևորգյան, 489):

¹³ Առաքելյան Վ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 110:

¹⁴ Ղազինեան Ա., Գրիգոր Նարեկացի, բանաստեղծական արուեստը, Ե., 1995, էջ 153:

Նշված օրինակներում հարակրկնության տեղը թարգմանություններում նույնությամբ արտահայտելը հեշտ է: Մինչդեռ երբեմն՝ «խոսքի իրար պատկանող հատվածներում կրկնվող բառի տեղն այնքան կարևոր է լինում իր իմաստային կշռի համար, որ թարգմանչի ջանքերն ուղղվում են դրա պահպանմանը, և որի համար երբեմն միայն մի փոքր լեզվական հնարավորություն է լինում»¹⁵:

գ) Հեղինակի ոճին և խոսքի ռիթմին առանձին երանգ հաղորդելու համար կիրառվել է նախադրների կրկնությունը.

Առ բարիս եւ եղեռնագործս,

Առ նկունս եւ **առ** բարիս («Մատեան», 256):

Նախադրների կրկնությունն աշխարհաբար թարգմանություններում չէր կարող արտահայտվել, և հետևաբար հատվածները կորցրել են թե՛ ռիթմը, թե՛ ոճական նշանակությունը.

Բարիների և եղեռնագործների, նկունների և արիների (Խերանյան, 12):

Բարի, թե եղեռնագործ,

Նկուն, թե խիզախ (Գևորգյան, 21):

դ) Միջնադարյան բանաստեղծությունը հարուստ չէ վերջույթներով¹⁶, սակայն Նարեկացին հարակրկնություններ է ստեղծել նաև դրանցով, որոնք արտահայտվել են՝

1. Դերանուններով (*քո, իւր*).

Առ վշտանգելոյս մխիթարութիւն՝ բաժակ **քո**,

Առ նեղելոյս ընդարձակութիւն՝ կամք **քո** («Մատեան», 367):

Նշված հատվածը նաև հարակրկնության և վերջույթի զուգորդման օրինակ է: Դերանվան կրկնությունը Խերանյանի թարգմանության մեջ պահպանվել է, սակայն թարգմանիչը փոխել է հատկացուցիչ հատկացյալի դիրքը, իսկ Գևորգյանն այն արտահայտել է դիմային վերջավորությամբ.

Վշտացյալիս մխիթարության համար՝ **քո** բաժակը,

Նեղյալիս ընդարձակության համար՝ **քո** կամքը (Խերանյան, 134):

Վշտամորմոքիս մխիթարելու համար՝ բաժակդ,

¹⁵ **Федоров А.**, նշվ. աշխ., էջ 160-161:

¹⁶ **Ղազինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 158:

Կամբդ՝ արձակելու սաստիկ նեղվածիս (Գևորգյան, 189):

Գրեթե նույն կերպ թարգմանություններում չի պահպանվել նաև բնագրի «**իւր**» դերանվան դիրքը.

Յաղթողականն եւ փողբ **իւր**,

Զաւրաւորն եւ մարտիկք **իւր** («Մատեն», 403):

Հաղթողն **իւր** փողերով,

Զորավարն **իւր** մարտիկներով (Խերանյան, 168):

Հաղթողն՝ **իւր** փողով, գովյալն՝ **իւր** փառքով (Գևորգյան, 234):

Ինչպես նկատելի է, էականը միայն կրկնությունը վերստեղծելը չէ, այլ նաև դրա տեղն ու դիրքը մնացած անդամների նկատմամբ ապահովելը, քանի որ աննշան փոփոխությունն անգամ թարգմանությունը զրկում է հեղինակի ստեղծած ինքնատիպ ոճից:

2. Օժանդակ բայի երկրորդ և երրորդ դեմքերով ստեղծված հարակրկնությամբ, որը տվյալ դեպքում զուգորդվել է «**եթե**» շաղկապի կրկնությամբ.

Եթե մխիթարես՝ ամենաիշխան **ես**,

Եթե նորոգես՝ ամենակալ **ես** (Մատեն, 556):

Ինչպես նշել է էդ. Զրբաշյանը, «բառերի կանխամտածված բացթողումը մեծ մասամբ օգտագործվում է դեպքերի կամ խոսակցությունների արագ բնույթի, մարդկանց հուզված հոգեվիճակի մասին պատկերացում տալու համար»¹⁷: Այսպես, Գևորգյանը օժանդակ բայի բացթողման օգնությամբ հեղինակի խոսքին առավել կտրուկ երանգ է հաղորդել.

Եթե մխիթարել՝ ամենաիշխան **ես**,

Եթե նորոգել՝ ամենակալ **ես** (Խերանյան, 326):

Եթե սփռվել՝ ամենախնամ,

Եթե նորոգել՝ ամենակարող (Գևորգյան, 460):

Այսպիսով, Նարեկացին արտահայտչականության էր հասնում կրկնության բազմաթիվ ձևերի ու հնարքների միջոցով, սակայն միննույն

¹⁷ Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Ե., 1972, էջ 265-266:

ծամանակ գիտակցում էր, որ կրկնաբանությունը գեղարվեստական գործի թշնամին է: Եվ նույն մտքերին ու նկարագրություններին անդրադառնալիս փոխում էր ոչ թե կրկնության էությունը, այլ խոսքի եղանակը.

Ընդ այսր հառաչանաց թախծութեան ողբոց

Ի բազմաց կերպից շարակարգելոց («Մատեան», 592):

Ակնհայտ է, որ կրկնությունը՝ իբրև գեղարվեստական արտահայտչական միջոց, թարգմանություններում չարտահայտելը տարբեր կերպ է անդրադարձել թարգմանության որակի վրա՝ մի դեպքում թուլացրել է բնագրի ոճական առանձնահատկությունը, մեկ այլ դեպքում՝ հարակրկնությունների միջոցով ստեղծված բանաստեղծական ռիթմը: Մինչդեռ վերստեղծելու դեպքում ունեցել է նույն դերը, ինչ բնագրում՝ նպաստել է հեղինակի մտքերի առավել զգացմունքային արտահայտմանը, կատարյալ է դարձրել բանաստեղծական հատվածների ռիթմը, ընդգծել ու առանձնացրել է իմաստային կարևոր նշանակություն ունեցող հատվածները:

Ա. Ապրեսյան

Կրկնության արտահայտչականությունը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի աշխարհաբար թարգմանություններում Ամփոփում

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում կրկնությունն արտահայտվել է՝ նույն բառի բազմիմաստ կիրառմամբ, մտքի հաճախակիությամբ, շարահյուսական և քերականական միջոցներով և այլն: Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի՝ «Մատեան»-ի աշխարհաբար թարգմանություններում կրկնության վերոնշյալ հնարքները դրսևորվել են հետևյալ կերպ՝

ա) ռիթմա-շարահյուսական կրկնությունները թարգմանություններում նույնությամբ են արտահայտվել՝ փոխանցելով բնագրի բանաստեղծական ռիթմը, հստակությունը և զգացմունքայնությունը,

բ) բառային կրկնությունները թարգմանիչները հիմնականում չեն պահպանել, սակայն թարգմանություններում ընկալելի են դրանց իմաստային տարբերությունները, որի հետևանքով ընդգծվել, առանձնացվել է ստեղծագործության գլխավոր միտքը,

գ) ոճական կրկնությունները Մկրտիչ Խերանյանը վերստեղծել է նույնությամբ, մինչդեռ Վազգեն Գևորգյանի թարգմանության բաղադրիչներն արտահայտվել են որոշ կառուցվածքային, հնչերանգային տարբերություններով:

А. Апресян

Выразительность повторов в переводах на современный армянский язык «Книги скорбных песнопений» Григора Нарекаци

Резюме

В «Книге скорбных песнопений» Григора Нарекаци повторы выразились в многократном применении одного и того же слова, мысли, синтаксических и грамматических средств и т. д. В переводах «Книги скорбных песнопений» на современный армянский язык Мкртича Хераняна и Вазгена Геворкяна вышеперечисленные приемы проявились следующим образом:

а) ритмично-синтаксические повторы выражены тождественно, передавая поэтический ритм, четкость и эмоциональность оригинала;

б) переводчики в основном не сохранили словесные повторы, но в переводах понятны их смысловые отличия, в результате чего подчеркнута главная идея произведения;

с) стилистические повторы Мкртич Херанян воссоздал идентично, тогда как у Вазгена Геворкяна составные части перевода выражены некоторыми структурными и звуковыми отличиями.

A. Apresyan

The Expressiveness of Repetitions in the Translation of the *Book Of Lamentation* by Grigor Narekatsi into Modern Armenian

Summary

In the *Book of Lamentation* by Grigor Natekatsi repetition is expressed in the reiterated use of the same word, in the frequency of thought, in the syntactical and grammatical means and so on. The numerous forms and methods in the translations of the *Book of Lamentation* into modern Armenian by Mkrtych Kheranian and Vazgen Gevorkian were expressed in these ways:

а) in the translation the rhythmic syntactical repetitions are expressed identically, transmitting the poetical rhythm, the precision and the emotionality of the original;

б) on the whole translators have not preserved the word repetitions, but in the translations their meaning's differences are understandable, thus underlining and singling out the main idea of the work;

c) Mkrtich Kheranian recreated stylistic repetitions identically, while Vazgen Gevorgian expressed the composing parts of the translation by some sound and nuance differences.

Խմբագրություն է ուղարկվել 22.08.19
Հանձնարարվել է գրախոսության 29.08.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19